ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 05 >> 12 2011թ. N: 140 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 161-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի թիվ 1384-Ն որոշմամբ /հավելված 1/, հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետը և Հովհաննես Հովհաննիսյանի 2011 թվականի նոյեմբերի 30-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն և 4 օր ամենամյա լրացուցիչ արձակուրդները՝ 2011 թվականի դեկտեմբերի 26-ից:
2. Արձակուրդի տևողությունը 24 աշխատանքային օր՝ 2011 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2012 թվականի փետրվարի 2-ը ներառյալ:
3. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:
4. Արձակուրդի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության առողջապահության բաժնի պետ Եղիշե Խաչատրյանին:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է